ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Erdal Ilter. Ermeni kilisesi ve terör (Հայ եկեղեցին և ահաբեկչությունը), Ankara, 1996 *գրքի առթիվ։*

Պատմ. գիտ. դոկտոր ԱՐԹՈՒՐ ՊԵՅԼԵՐՅԱՆ (Փարիզ)

Վերոհիշյալ խորագիրը կրող փոքր հատորը (176 էջ) Անկարայի համալսարանի «Օսմանյան պատմության հետախուզության կենտրոնի» հրատարակչատունեն լույս տեսած է, ինչ որ կապացուցանե, թե պաշտոնական մարմիններու հովանավորությունը կ'վայելե։

Հեղինակին նպատակն է այս ուսումնասիրության մեջ խնդրո առարկա ընել հայ առաքելական եկեղեցվո կղերին դերը հայ ժողովուրդի ազատագրական պայքարին մեջ։ Գիրքը կը բաղկանա երկու զլխավոր բաժիններե։ Յուրաքանչյուր բաժին ալ ունի անշուշտ իր ենթաբաժինները։ Ա. գլուխը (էջ 25—80) կը շոշափե հայ-օսմանյան հարաբերությունները սկիզբեն մինչև Լոզանի դաշնագիրը (24 հուլիս 1923), իսկ Բ. գլուխը (էջ 81—118) կվերաբերի հայկական սփյուռքի ծագումին և ընդարձակումիս՝ մինչև մեր օրերը։ Էջեր 119-են 134-ի միջև գրացանկ, էջ 139-են 154՝ անձնանուններու և տեղանուններու ցանկ, իսկ մնացյալը Խրիմյան Հայրիկեն մինչև մեր օրերս էջմիածնի կաթողիկոսներու նկարներ։ Հավատարիմ իր նախորդներու հանկերգին, ըստ հեղինակին հայերը օսմանյան «զրախտին» մեջ ապրած են մինչև նախորդ դարու սկիզբը և տերությունն ալ խիստ գոհ այդ հավատարիմ ժողովուրդեն զայն կոչած է «միլլէթ-ը սատրգա»[1] (տե՛ս էջ 27)։ 1856 թ. բարենորոգումներու ֆերմանեն հետո կգրե պատմ. գիտ. դոկտ. Էրտալ Իլթեր, հայերը «կուսակալներ, դեսպաններ և նույնիսկ նախարարներ ալ ունեցան»։ Բայց չըսեր, թե ի՞նչ էր պատճառը որպեսզի մեծ եպարքոս Ալի փաշա Խրիմի պատերազմեն հետո և Փարիզի դաշնագրին նախօրյակին (12 փետրվար 1856-ին) Կյուլհանեի բարենորոգումներու ֆերմանը հրատարակելու պարտադրված ըլլար։ Իլթեր անգիտանալ կը ձևացնե նաև, թե արքայական ֆերմանին հրատարակումը զավառներու մեջ որքան խոր զայրույթ առաջ բերած էր. նկատելով թե այլևս կյավուրը և իսլամը օրենքի առաջ հավասար պետք էր որ նկատվեին[2]։ 100 քրիստոնյայի վկայություն օսմանական դատարանի առջև նվազ արժեք կը ներկայացներ, քան թե մեկ իսլամի վկայություն[3]։

Իլթեր կաթոլիկ և մանավանդ բողոքական միսիոնարները հանցավոր կը նկատե, որոնք Փոքր Ասիո զավառներու մեջ նախորդ դարու առաջին քառորդեն հետո ուսում ճամբելով, հայ երիտասարդ սերունդին մոտ ազգային գիտակցության զարթնումին սատարեցին։ Հոս ևս ան անգիտանալ կը ձևացնե,

---

1 *Որ կը նշանակե «հավատարիմ ազգ»։*

2 *Ըստ թուրք պատմաբան Ապդյուրահման Շերեֆի վկայության Պոլսո մեջ երբ մահմետական մը կանարգե և ոստիկանատուն կառաջնորդվի, ոստիկանապետը կ'ըսե. «Տղաս, այլևս կյավուրին կյավուր պիտի չըսես, հիմա Թանզիմաթ կա»։ Տե՛ս* Abdürrahman Seref. Tarih Musahebeleri, Istanbul, 1339/1923, p 73.

3 *Տե՛ս* Accounts & Papers. Conditions of the Christians in Turkey, London, 1867, pp. 3—4; Malcolm McColl. England's Responsibility towards Armenia, London, 1895, pp. 8—9.

թե ինչո՞ւ Մարգարեին հավատացյալ ժողովուրդը չէր ուզեր քրիստոնյա Եվրոպայեն եկած միսիոնարներուն բացած դպրոցները ղրկել իր տղաքը։ Իսլամը, Մարգարեին հրահանգներեն տոգորված, սրհամարհանքով կը դիտեր եվրոպացի կամ ամերիկացի քրիստոնյա միսիոնարներու գործունեությունը, ինչ որ բնավ նույնը չէր մյուս ոչ-մահմեդական ժողովուրդներուն (հույն, հայ, ասորի, պուլղար) համար, որոնք վանոնք գրկաբաց ընդունեցին[4]։ Մինչդեռ խավարամիտ և հետադիմական իսլամը կրոնական զգացումներու տրամադրության տակ Արևմտյան հառաջդիմություններեն միշտ հեռու մնաց։ 1825-են 1875ի միջև, կես դարու ընթացքին արդեն, օսմանահպատակ ոչ-իսլամ ժողովուրդներու մոտ ուսման առաջդիմություն արձանագրված էր։ Օսմանյան կայսրության ոչ-իսլամ ժողովուրդներու մոտ ազատագրական պայքարի հիմնական մեկնակետերեն մեկը այս է, որ ազգայնամոլ թուրք պատմաբանները միշտ կը խուսափին հիշելու։ Պատմաբան Իլթեր «Խրիմյան-Վարժապետյան-Իզմիրլյան եռյակ հրոսակապետությունը (çete) Հայկական Հարցին ծագումին պատճառ եղավ» կը գրե։ Առանց իսկ Սան Ստեֆանոյի դաշնագրին (3 մարտ 1878) և Բեռլինի դաշնագրին (13 հուլիս 1878) հայոց վերաբերյալ 16-րդ և 61-րդ հոդվածները ընթերցողին ներկայացնելու, ան կը գրե թե Բեռլինի վեհաժողովը գրեթե առանց փոփոխության ենթարկելու Սան Սթեֆանոյի դաշնագրին հայոց վերաբերյալ 16-րդ հոդվածը, զայն նույնությամբ վավերացուց[5]։ Մեզի լավ ծանոթ է, թե բնավ այդպես չէ իրականությունը։ Խիստ վառ երևակայության տեր, պատմ. գիտ. տոքթոր Իլթեր լրբությունը այնքան առաջ կը տանի, որ նույնիսկ տեղ մը կը գրե, թե «Պոլսո պատրիարքարանը երբ վերահասու եղավ, թե հեռատես և խելացի կարգ մը եկեղեցականներ հեղափոխական ծրագիրներու հետամուտ չեն, զանոնք պաշտոնանկ ըրավ (անոնցմե ոմանք ալ սպաննել տվավ) և անոնց տեղ երիտասարդ եպիսկոպոսներ նշանակեց» (տե՛ս էջ 50)։ Տարակույս չկա, թե այսքան անմիտ ու ձրի զրպարտության մը հեղինակ տոքթ. Իլթեր ոչ մեկ փաստ չունի ներկայացնելու։ Սակայն, քանի մը տարի հետո, հաջորդ գրության մը մեջ, ինք կամ ուրիշ թուրք պատմաբան մը իբր ստույգ աղբյուր զայն պիտի նշեն իրապես գոյություն ունեցած մի եղելություն։

Բեռլինի վեհաժողովին հաջորդող ամիսներուն, ըստ Իլթերի, «Ներսես պատրիարք, որ համոզված էր, թե արվեստական կերպով ստեղծված Հայկական Հարցին լուծումը միայն հեղափոխությամբ և ապստամբության շնորհիվ կրնար իրականանալ պատրիարքարանի մեջ «Բարենորոգումներու հանձնաժողով» անունով հանձնաժողով մը ստեղծած էր»։ Այս հանձնաժողովը, կը գրե Իլթեր. «1879 տարվո կիսուն, առաջնորդարաններու ուղարկած հրահանգով մը բոլոր հայերը ըմբոստության կը հրավիրեր» (տե՛ս էջ 48—49)։ Թուրք պատմաբանին սույն տեսակետը լրիվ պատմական ճշմարտության խեղաթյուրումն է։ Այդ շրջանի պատմական բոլոր իրողություններու հետին մանրամասնություններուն շատ լավ տեղյակ ըլլալով կրնանք հաստատել, թե բացարձակապես հերյուրածո է սույն վարկածը և հրձիգ պատմաբանը նպատակ ունի օսմանյան կառավարության և գավառներու պաշտոնյաներուն ոխրտ վարչության գործելակերպը արդարացնելու համար «երևակայական տվյալներ» ստեղծել։ Պատրիարքարանը չէ որ «Բարենորոգումներու հանձնաժողով» մը ստեղծած էր, այլ Անդլիո Պոլսո դեսպան Լայարտի տեվական թելադրանքին ի վերջո տեղի տալով 1879ի ամառը Ապտուլ Համիտ

[4] Yusuf H Bayur. Türk Inkilabi Tarihi, (2e éd), Ankara, vol. I, 1964. 2e partie, p. 251.

[5] Հայկական հարցի ծագումին մասին բազմաթիվ ուսումնասիրություններ լույս տեսած են։ Կը հիշենք մի քանին, Խ. Բագալյան. Հայկական Հարցը Սթեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թվին. Երևան, 1955։ Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. Երևան, 1978, A. Beylerian. Les origines de la question arménienne du Traité de San Stefano an Congres de Berlin.—Revue d'Histoire Diplomatique, 1973, № 1-2, pp. 139-171.

Կիլիկիո շրջանի և մին ալ Արևմտահայաստանի նահանգներուն կացությունը քննելու համար երկու հանձնաժողով ստեղծել տվավ, որոնց նախագահները Թուրք և իրենց օգնականները՝ հայ էին[6]։ Այս երկու հանձնախումբերը տեղվույն վրա շաբաթներով երկրի մահմետական թե ոչ-իսլամ ժողովուրդներու գանգատները լսեցին, հարաբերության անցան, տեղեկագրեր պատրաստեցին զավառներու ժողովուրդներու վիճակին բարելավման համար առաջարկներ ներկայացուցին Բ. Դռան։ Ի վերջո բոլոր այս աշխատանքն ալ մնաց ապարդյուն, քանի որ բարենորոգումներու գործադրության ոևէ կերպով սուլթան Ապտուլ Համիտ համաձայն չէր։

Թուրք պատմաբանը ոչ 1894—1896ի կազմակերպված ջարդերուն և ոչ ալ Համիտիե զորագունդերու սպանդներուն կանդրադառնա։ Միշտ նպատակ ունենալով Թուրքիո ժողովուրդի հետադիմական դասակարգը գրգռել, որոնց թեև օտար լեզուներու անտեղյակ, կրնան սակայն «Իլեթիշիմ» և «Պելկա» հրատարակչատունեն վերջերս լույս տեսած տոքթ. Խեր-ոսի, Վ. Տատրյանի և Թաներ Աքչամի գիրքերեն լուսաբանվիլ, կը ջանա առավելագույն չափով և սմսեղուկ կերպով իեղաթյուրել Օսմանյան կայսրության արյունոտ պատմական էջերը։ Արդարև հետաքրքրական է հաստատել, թե Իլթեր Ատանայի 1909-ի կազմակերպված ջարդերուն անդրադառնալով կը գրե «13 օր տևեց Ատանայի դեպքերուն ժամանակ 20 հազարի մոտ թուրք և հայ մեռան» (տե՛ս էջ 58)։ Ան անհրաժեշտ չի նկատեր ճշդելու, թե զոհերուն որքա՞նը հայ էր և որքա՞նը թուրք։ Անշուշտ պատմական ճշմարտության անգիտակ թուրք ընթերցողը դյուրավ կրնա մտածել, թե այդ թվին գոնե կեսը թուրք էր[7]։

Միշտ թիրախ ունենալով անարգել ու պախարակել հայ առաքելական եկեղեցվո կղերը, ան կը ջանա երևակայական փաստերով իբր թե ապացուցանած ըլլալ, որ հայ ժողովուրդին դժբախտության պատճառը իր «եկեղեցական դասուն տխմար ու անմիտ գործելակերպը» եղած է։ Հայ եկեղեցականին քաղաքական գործիչի մեծ դեր մը սահմանելով մինչև մեր օրերը, որուն մեր եկեղեցական դասը ոչ հավակնությունը և ոչ ալ կարողությունը ունեցած է, ինչպես գիտենք և արդեն իր կոչումին ալ չի համապատասխաներ, կը մոռնա, որ եթե անցյալին Խրիմյան մը, Ներսես պատրիարք մը կամ Օրմանյան մը իբր պատասխանատու գործած են իրենց ժողովուրդին համար, այդ պաշտոնական ազգապետի հանգամանքը իրենց կու գա ԺԹ-րդ դարուս Պոլսո գրավումեն հետո սուլթան Մեհմետ Բ-ի հրովարտակով (ֆերման), որ հաջորդաբար բոլոր սուլթանները վերանորոգած են։

Ա. ընդհանուր պատերազմի ընթացքին հայ-թուրքական հարաբերությունների մասին իր տեսակետները այլապես կեղծիքի և ձրի զրպարտությունների վրա հիմնված են։ Ան կը գրե թե «երբ Օսմանյան կայսրությունը զորաշարժ հռչակեց (21 հուլիս 1914)[8] Էջմիածնի կաթողիկոս Գեորգ Ե. Կովկասի ընդհանուր կառավարիչ Վորոնցով-Դաշկովի գրավոր կերպով, կեղծավորությամբ և քծնելով (yaltaklanarak) դիմելով, հայոց վրա Ռուսաստանի պաշտպանությունը խնդրեց։ Ասոր փոխարեն խոստացավ, որ հայերն ալ ռուս բանակներուն կողքին օսմանյան պետության դեմ պիտի կռվին» (տե՛ս էջ 60)։

6 Կիլիկիո շրջանի հանձնախումբին նախագահ նշանակված էր Մաղհար փաշա օգնական ունենալով Հովհաննես Նուրյան, իսկ Կարին, Պիթլիս և Տրապիզոն նահանգներու քննիչ յանձնախումբի նախագահն էր Յուսուֆ փաշա, որ իբր օգնական ունեցավ, Ներսես պատրիարքի առաջարկով, Մարկոս էֆենտի Աղաբեկյան։

7 Ըստ Ադանայի ջարդերու քննիչ հանձնախումբի անդամ Ադրիանուպոլսո երեսփոխան Հակոբ Պապիկյանի տեղեկագրին՝ 7 հունիս 1909 թ., հայերը 19479 հոգի զոհ տված են, հույները՝ 250, քրիստոնյա արաբները՝ 850 և քաղդեացիները՝ 422 հոգի, ընդամենը՝ 21001 հոգի։ Սույն տեղեկագիրը, որ Պոլսո պատրիարքարանը հրատարակած էր, հետագային մեկ օրինակ ուղարկած է ամերիկյան դեսպանատունը, որ զայն փոխանցած է Վաշինկթըն։ Այժմ այս օրինակն է, որ պահված է Միացյալ Նահանգներու դիվաններուն մեջ U. S A., National Archives (Washington D. C.), RG 59 867.4016/13.

8 Նոր տոմարով կը համապատասխանե 3 օգոստոս 1914-ի։

Իլթերի իբր թե հայոց դավաճանությունը փաստող սույն վարկածը անշուշտ շատ դյուրին է ջրել։ Նախ երբ ան կը գրե, թե «կաթողիկոս Գեորգ Ե. պատերազմի սկզբին հայերու ռուսերու կողքին պատերազմի մասնակցությունը առաջարկեց Օսմանյան կայսրության դեմ» սխալ է, քանի որ Օսմանյան կայսրությունը ճիշդ երեք ամիս հետո է, որ մեծ պատերազմին մասնակցեցավ Գերմանիո կողքին Դաշնակից տերություններու դեմ։ Եվ երբ ան պատերազմի մտավ, արդեն զորահավաքը լրացուցած էր։ Արդյոք պատմաբան Իլթեր կակնկալեր, որ Կովկասի ռուսահպատակ հայերը Թուրք բանակին միանալով Ռուսաստանի դեմ պե՞տք էր որ կռվեին։

Նենգամիտ պատմաբան Իլթեր հետևյալ կերպով կը համառոտե 1915 տարվո գարնան սկիզբը Ռուսաստանի կողքին կռիվներուն մասնակցող հայ կամավոր ջոկատներուն (զանոնք çete կանվանե, որ ինչպես ըսինք հրոսախումբ կը նշանակե) զանազան գործունեությունը, որոնց յուրաքանչյուրին միաժամանակ կը պատասխանենք.

1. Հայ կոմիտեները[9] կը գրե «ծրագրած էին պատերազմը սկսելուն պես ռուս բանակներուն օգնել և անոնք երբ սահմանը անցնեին անոնց միանալ»։

— Պարզ է թե այս հերյուրածո տեսակետը որևէ հիմք չունի։ Եթե այդպիսի ծրագիր մը կար ինչո՞ւ հայ կոմիտեները չի գործադրեցին։ Պատասխանը հստակ է և անվիճելի։ Որովհետև զինվորական տարիքի մեջ գտնվող և bedel-i askeriye (զինվորական տուրք) չի վճարող յուրաքանչյուր հայ և ինչպես նաև Թուրք, բանակին միացած էր։ Իսկ եթե կարդ մը հայ զինվորներ կռիվներու ընթացքին հաջողեցան ռուսական բանակներուն միանալ ասիկա լոկ անհատական նախաձեռնություն մըն էր և ոչ թե կոմիտեներու կողմե նախապատրաստված ծրագրի մը համաձայն[10]։

2. Իլթեր կը գրե, թե զորաշարժի (seferberlik) հայտարարությունեն հետո ասոնք (հայերը) մերժեցին զինվորագրվիլ և զենքերնին առին ու լեռները բարձրացան։

— Ծիծաղելի և անհիմն պնդում մը։ Զորաշարժե հետո (3 օգոստոս 1914) անոնք որոնք զինվորական տարիքի մեջ կը գտնվեին բոլորն ալ մեկ ամսվա ընթացքին արդեն զինվորագրված էին, ի բաց առյալ անոնք, որոնք զինվորական տուրք (bedel-i askeriye) վճարած էին[11]։ Արևելյան ճակատի վրա նոյեմբերեն սկսյալ հայ զինվորները գործավորներու գումարտակներու (amele taburu) մեջ զրկվեցան։ Նոր տարվա սկիզբը (1915ի հունվարին) Կովկասի ճակատին վրա օսմանյան բանակին մեջ հայ զինվոր գրեթե չէր մնացած։

3. Զինվորագրվողները զենք և ռազմանյութ գողնալով փախած են և կոմիտեներու ենթակա հրոսակախումբերու միացած։

— Նենգամիտ պատմաբան Իլթերի կարելի է հարցնել, թե արդյոք այդ դինյալ հրոսակախումբերը ինչո՞ւ բնավ չի փորձեցին դժբախտ տարագրյալներու կարավանները սուսյդ մահե ազատել, որոնք օրերով և հաճախ ալ հետիոտն ամենադժնդակ պայմաններու մեջ կը ճամբորդեին։

4. Արևելյան Անատոլուի բազմաթիվ վայրերուն մեջ գաղտնի կոմիտեները իրենց գործունեությունը ավելցուցած են, ռումբի գործարաններ կառուցին, զենքի պահոցներ ստեղծեցին։

---

9 Հեղինակը անշուշտ Թրքահայ կուսակցություններուն կակնարկե։

10 Կովկասի ճակատի կռիվներուն մասին տեսնել մանավանդ Ա.—Դ0-ի արժեքավոր և անաչառ հատորը՝ Մեծ Դեսքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին, Երևան, 1917։

11 Պատերազմի առաջին երկու տարիներուն իսլամն ալ քրիստոնյա հպատակներուն նման զինվորական տուրք վճարելով կրցավ խուսափիլ զինվորագրվիլե։ Բայց 1916-ի նոյեմբերին այս օրենքը ջնջվեցավ և անոնք, որոնք զինվորական տարիքի մեջ կը գտնվեին, բոլորն ալ բանակ ուղարկվեցան։

— Ծիծաղելի վերադրում մը։ Երբ կոմիտեները պատերազմի ժամանակ ռումբի գործարաններ կը կառուցեին Թուրք կառավարությունը ի՞նչ կըներ արդյոք։

5. Անդեն և անպաշտպան մահմեդական ժողովուրդին վրա հարձակեցան, ահագին անմեղներ վայրենաբար ջարդուեցան (հայոց կողմե)։

— Եթե հայերը պատերազմի առաջին օրերեն սկսյալ ապստամբած էին, ինչպես կը դրե Իլթեր, ինչո՞ւ համար Բ. Դուռը «Միություն և Առաջդիմություն» կոմիտեի պաշտոնաթերթ նկատվող և սիոնիստ հրևաներու հակակշռին ենթակա Le Jeune Turc օրաթերթին հաղորդագրություն մը ղրկելով «Հայ ժողովուրդի հավատարմության մասին գոհունակությունը» կը հայտներ[12]։ Նույնիսկ Էնվեր փաշա հայ զինվորներու պատերազմի դաշտին վրա ցույց տված հավատարիմ ծառայությունը հաստատող նամակ մը կը ղրկեր Գոնիայի հայ եկեղեցվո առաջնորդին[13], ավելցնելով, թե խիստ զգացված էր անոնց ցույց տված գոհողության ոգիեն։ Էնվեր փաշայի այս նամակը Պոլսո գերմանական դեսպանատան պաշտոնաթերթ Osmanischer Lloydի մեջ լրիվ հրատարակվեցավ 26 փետրվար 1915ին, որ մենք ալ ֆրանսական դիվաններու անտիպ փաստաթուղթերու հավաքածուին մեջ արտատպեցինք[14]։

Իլթեր և իր նման նենդամիտ պատմաբանները երբ հայ ժողովուրդի ըմբոստության մասին կը դրեն, կը մոռնան, որ Փոքր Ասիո բազմաթիվ քաղաքներուն մեջ (Էրզրում, Տրապիզոն, Մերսին, Սամսուն, Խարբերդ, Իզմիր և Հալեպ) գերմանացի, ավստրիացի և ամերիկացի դիվանագիտական գործակալներ և միսիոնարներ կային։ Անոնցմե ոչ մին հայոց ապստամբության մասին տող մը իսկ չէ տեղեկագրած։ Եթե Վանի մեջ հայ ժողովուրդը ինքնապաշտպանության դիմեց, ինչպես ավելի հետո Մուսա Տաղի և բոլորովին անհավասար պայմաններու մեջ, այդ հանդուգն նախաձեռնության շնորհիվ Թուրք իշխանություններու ծրագրած տեղահանության և բնաջնջումի ճակատագրեն հաջողեցավ ազատ մնալ։ Իլթերի և իր նման մեկնաբանող պատմաբաններու համար պետք է զանոնք հանցավոր նկատել տարագրությունե և բնաջնջումե դերծ մնալու համար զենքի ուժով ինքնապաշտպանության դիմելնուն պատճառով։

6. Իլթեր «հայկական ապստամբության գլուխը Օսմանյան Խորհրդարանի անդամ երեսփոխաններ, ծանոթ քոմիթեճիներ, եկեղեցականներ, բժիշկներ և փաստաբաններ կային» կը դրէ։

— Պատմաբան Իլթեր վերև կատարած ձրի ամբաստանությունով կուզե 24 ապրիլ 1915ի դիշերը Պոլսո մեջ հայ մտավորականներու ձերբակալությունները արդարացնել։ Օսմանյան Խորհրդարանի հայ երեսփոխաններեն, որքան որ դիտենք, մի միայն Գարեգին Փաստրմաճյանն[15] է, որ Կովկասի կամավորական շարժումին մասնակցած է և Թուրքիո մեջ ոչ որ որեէ կերպով ապստամբական շարժումի մը մասնակից չէ եղած որ արդեն տեղի ալ չէ ունեցած։

---

12 Տե՛ս «Իթթիհատ վե Թերեքքի» կուսակցության բաներեր նկատվող Jeune Turc 18 հունվար 1915 թ-ին մեջ լույս տեսնող Բարձր Դռան հաղորդագրությունը, արտատպված A. Beylerian (ed.). Les Grandes Puissance L'Empire ottoman et les Armeniens dans les Archives françaises (1914–1918), Paris, Publications de la Sorbonne, 1983, p. XXXIII.

13 Գոնիայի հայ առաջնորդն էր Գարեգին վրդ. Տրապիզոնցի՝ հետագային Պոլսո պատրիարք։

14 Էնվեր փաշայի նամակին հրատարակության մասին տե՛ս A. Beylerian, վերև նշված, էջ XXXIV։

15 Գարեգին Փաստրմաճյան՝ կամ Արմեն Գարո, 1914-ի փետրվարին օսմանյան երեսփոխանական ընտրություններուն չընտրվեցավ։ 1914-ի սեպտեմբերին Թիֆլիս կը գտնվեր։ Եւ միայն ան է, որ իբր հայտնի կուսակցական Կովկասյան կամավորական շարժումին մասնակցեցավ պատերազմի առաջին օրերուն իսկ։

Ծանոթ է, թե Պոլսեն աքսորված մտավորականներեն ոչ մին դատական հետապնդումի կամ քննության ենթարկվեցավ։ Անոնք իբր թե Տիարպեքիրի զինվորական ատյանի առջև հարցաքննության պիտի ենթարկվեին։ Պոլսո մեջ «հանցանք» գործող կուսակցական կամ մտավորականները ի՞նչ հարկ կար մինչև Տիարպեքիր դրկել իբր թե զանոնք դատելու համար։ Միայն այս պարագան բավ է փաստելու թե կառավարությունը նախապես ծրագրած էր, թե ի՞նչ նպատակավ զանոնք անակնկալորեն ձերբակալելով աքսորած էր։ Իլթեր երբ իբր թե համոզված կերպով կգրե, թե «կանխամտածված ցեղասպանության ծրագիր մը խնդրո առարկա իսկ չի կրնար ըլալ» (տե՛ս էջ 62), կարժե իրեն հիշեցնել, թե ավելորդ չըլլար որ Ամերիկայի Պոլսո դեսպան Մորկընթաուի հուշերը ուշի ուշով տեսնե, ուր «Թալեաթ և էնվեր բնավ չեն իսկ ծածկած հայ ժողովուրդը բնաջնջելու իրենց ծրագիրը»[16]։

Իլթեր դրելե հետո, թե Լոզանի դաշնագրով Թուրքիո անկախությունը ճանչվեցավ ու Հայկական Հարցը թաղվեցավ (տե՛ս էջ 74), լրբորեն կավելցնե որ, «ըստ Լոզանի դաշնագրին 31-րդ հոդվածին, բոլոր անոնք, որոնք նախապես օսմանահպատակ էին և օտար հպատակություն ստացած, երկու տարվա ընթացքին Թուրքիա՝ իրենց ծննդավայրը վերադառնալու, վերահաստատելու և կրկին թրքահպատակ ըլլալու իրավասություն ունեին։ Պատերազմի ընթացքին տեղահանվողներն ալ այս օրենքեն օգտվելու իրավունք ունեին»։ Բայց կը շարունակե անպատկառորեն պատմաբան Իլթեր մեղադրելով աքսորյալները «փոխանակ մինչև 24 հուլիս 1925 թ. Թուրքիա վերադառնալու, հայերը, որոնք ուրիշ երկիրներ[17] կը գտնվեին չի վերադարձան և թրքահպատակություններին կորսնցուցին» (տե՛ս էջ 90)։

Թուրք պատմաբանին դինիկ տրամաբանությունը ակներև է։ Ան չուզեր իսկ անդրադառնալ, թե մինչև Սուրիո անապատները տարագրվող ծվարած վերապրողներեն՝ որոնցմե շատերը իրենց ընտանեկան անդամներուն ամենադժնդակ պայմաններու մեջ սպաննության կամ մահվան ականատես ալ եղած էին, ո՞վ դեռ ցանկությունը կրնար ունենալ վերադառնալ այն տերության ծոցը, որ ալդքան անգթորեն ազգասպանություն մը կազմակերպելե հետո 13—26 սեպտեմբերի 1915ի «լքյալ դույքերու առժամյա» օրենքով մինչև իսկ տեղահանվողներուն բոլոր ստացվածքը պաշտոնապես յուրացուցած և կողոպտած էր[18]։

Առանց նկատի ունենալու զանազան տերություններու դիվաններու մեջ պահված հայկական ցեղասպանության փաստաթուղթերը, որոնցմե ոմանք արդեն հրատարակված են, պատմաբան Իլթեր կը հանդգնի նույնիսկ ըսելու, թե օսմանյան պետությունը հայերը բնաջնջելու որևէ ծրագիր չէ ունեցած (տե՛ս էջ 82)։ Ավելորդ չենք նկատեր հոս էրտալ Իլթերի և իր նման պատմական անհերքելի վավերաթուղթերը և դեպքերը նենգափոխելու կամ անգիտանալ ձևացնելու միտումը ունեցող պատմաբաններու ուշադրության հանձնել, որ Սարրոամըշի ջախջախիչ պարտությունեն հետո, որ նույնիսկ երկար ժամանակ Թուրքիո հանրային կարծիքեն գաղտնի ալ պահվեցավ[19], 1915 տարվո հունվար ամսո սկիզբը Պոլսո մեջ ժողով մը գումարվեցավ։ Այս ռադտնի ժողովին՝ ներկա եղան ներքին գործոց նախարար և «Միություն և Հառաջդիմություն» կուսակցության կեդրոնական կոմիտեի անդամ Թալեաթ պեյ, տոքթ. Նազրմ, Պոլսո կուսակալ Իսմայիլ Ճամպուլաթ, տոքթ. Պեհաեդտին Շաքիր և պատերազմական նախարարության քաղաքական բաժնի փոխ-

---

[16] H. Morgenthau. Secrets of the Bosphorus, London. 1918, pp. 223 և 229—230.

[17] Պատմաբան Իլթեր չըսեր թե «Հայերը տարագրված էին» մինչև Սուրիո և Միջագետքի անջրդի անապատները։

[18] Լքյալ դույքերու օրենքի մասին տե՛ս Պոլսոյ Hilâl կիսապաշտոնական օրաթերթեն արտատպված A. Beylerian, p. 112–114.

[19] Տե՛ս P. Hopkirk. On Secret Service. East of Constantinople, London, 1994, pp. 76—77.

տնօրեն դնդապետ Սելֆի։ Հետ երկարատև վիճաբանություններու, ժողովականները որոշեցին Թուրքիոյ բովանդակ հայ ժողովուրդի գոյության տեղահանության և սպանության միջոցավ վերջ տալ։ Ժողովականներու այս ծրագիրը 10 հոդվածներու մեջ ամփոփված է և այս պատճառավ ալ «Տասնաբանյա պատվիրաններ» խորագիրը կը կրե[20]։ Անգլիոյ պետական դիվաններուն մեջ պահված այս խիստ կարևոր փաստաթուղթը օսմաներեն բնագրեն թարգմանված է Առաջին Համաշխարհային պատերազմեն հետո 1919-ի սկիզբը, երբ ոճրագործ Երիտթուրք առաջնորդներու դատավարության համար դաշնակիցները պատրաստություններ կը տեսնեին։

Անշուշտ օսմանյան պաշտոնաթերթ Թաքվիմ-ի Վեքայիներու մեջ հիշված հայկական դեղասպանության վավերագրերը ևս որոնք 1919-ի գարնան Պոլսո մեջ Երիտթուրքերու դատավարության ընթացքին այնքան մեծ ազդեցություն ստեղծեցին, Իլթերի համար ևս գոյություն իսկ չունին[21]։ Հնարամիտ թուրք պատմաբանը, անպատկառություններ այնքան առաջ կը տանի, որ մինչև իսկ կամբաստանեն, ըսելով, թե «հայ կղերին պատրաստած կազմակերպությունները երկուքուկես միլիոն մահմեդական թուրք և քուրտ սպաննեցին» (տե՛ս էջ 7)։ Չարժե՞ր արդյոք հոս Իլթերի հարցնել, թե ինչո՞ւ հայ «քոմիտաճիները» տեղահանվող իրենց ժողովուրդը փոխանակ մահվան ճիրաններեն փրկելու մասին մտածելու նախընտրած են և մոնամանդ հացոդած (՞) միլիոնավոր «անդեն» մահմեդականներու սպաննել։ Այս ձրի զրպարտությունեն հետո, պատմաբան Իլթեր չըսեր, թե ինչո՞ւ այսօր Արևմտահայաստանի գավառներուն մեջ բնակչություն միմիայն իսլամներե կը բաղկանա և հայ չէ մնացած։

Ննդամիտ պատմաբան Իլթեր կը թվի, թե անտեղյակ է Լոզանի դաշնագրեն հետո Թուրք Հանրապետության կողմե կատարված առաջին մարդահամարի տվյալներեն։ Տիարպեքիր նահանգի մահմեդական երկսեռ բնակչությունը կը հաշվվի 185623 հոգի, մինչ հայոց թիվն է 2490։ Նույնպես ոստ նույն մարդահամարին, Պիթլիս նահանգը ունի 90341 մահմեդականներ և 287 հայ, Էյազիզ (Խարբերդ) նահանգը՝ 210181 մահմեդական և 2200 հայ, իսկ Էրզրում նահանգի 270376 մահմեդական բնակիչներուն փոխարեն միայն 22 հայ մնացած է։ Հետևաբա՛ր, ո՞ւր և ե՞րբ հայերը թուրքերուն և քուրտերուն հանդեպ ոճրագործություն գործադրած են, երբ հայ տարրն է, որ իր դարավոր հայրենիքին մեջ անհետացած է։ Պատմաբան Իլթեր նանդիտանա՞ թե Թալեաթ քանիցս գոհունակությամբ հայտնած է ռեսպան Մորգենթաուի, թե «Արևելյան նահանգներուն մեջ այլևս հայ չէ մնացած»[22]։ Նույն հայտարարությունը բրած է նաև օտար թղթակցի մը[23]։

Հատորին Բ. բաժնին մեջ հեղինակը կրկին հայ եկեղեցականին քաղաքական ազդեցիկ դերի մասին անդրադառնալ։ Միայն կղերը բավության նախաձեռնությամբ ևս դրե. թե «1945-ին Ռուսաստանի թելադրությամբ Էջմիածնի կաթողիկոս Գեորգ Զ. Կարսի և Արտահանի Հայաստանի միացումին հա-

---

[20] Public Record Office (Kew Garden, London). FO 371/4172 31307. Ֆրանսերեն թարգմանության համար տե՛ս A. Beylerian, վերև նշված, էջ XXIX–XXX. Պատմաբան Վ. Տաարյան վերջերս նորեկ հոդվածի մը մեջ ոչ ավելի վավերագիրը ուսումնասիրության առարկա բրած է. տե՛ս՝ V. Dadrian, The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians.—Holocaust and Genocide Studies, № 2, (1993), p. 173–201.

[21] Պոլսո զինվորական ատյանը 5 հուլիս 1919-ին Երիտթուրք առաջնորդներեն Թալեաթ փաշան, տոքթ. Նազիմը, Էնվեր փաշան և Ճեմալ փաշան ի բացակայության մահվան դատապարտեց. տե՛ս օսմանյան պաշտոնաթերթ Թաքվիմ-ի Վեքայիի 22 հուլիս 1919, թիվ 3604-ին հավելվածը։

[22] H. Morgenthau, վերև նշված, էջ 222։

[23] Տե՛ս Le Matin, 6 mai 1916, № 11757; The Times, 20 June 1916, № 41198, Տե՛ս նաև A. Beylerian, p. 206.

մար մեծ տերություններու մոտ դիմումներ կատարեց» (տե՛ս էջ 99)։ Մեզի ծանոթ է թե 1945-ի սեպտեմբերին Սթալին վերոհիշյալ նահանգները նախ Հայաստանի, ապա Վրաստանի համար պահանջեց։ Սթալինի այս պահանջը Միացյալ Նահանգներու խիստ ընդդիմության հանդիպելով վիժեցավ։

Հայաստանը ազատագրելու համար, կը շարունակե Իլթեր, Հայ եկեղեցին և անոր թև թիկունք կանգնող ազգային կուսակցությունները Բ. Համաշխարհային պատերազմեն հետո հակաթուրք քաղաքականության լծվեցան։ Հայկական ահաբեկչական շարժումը, որ 1973-են հետո սկսավ և շուրջ տասը տարի տևեց, ըստ պատմաբան Իլթերի, հայ եկեղեցականին թելադրանքով ծնունդ առած է։ Ան ազգային կուսակցություններու սփյուռքի մեջ կատարած կամ ունեցած գործունեությունը չափազանցելով կը ներկայացնե, որուն տգետ թուրք ընթերցող մը դյուրությամբ կրնա հավատալ և արդեն այս է հեղինակին բուն նպատակը։

Արդյոք կարժե՞ր պատմական որևէ հանգամանք չի ներկայացնող այս փոքրածավալ գրքին մասին դրախոսական մը գրել կամ անդրադառնալ։ Եթե ուզեցինք այս գրքին մասին անդրադառնալ պատճառը այն է, որ ան լույս տեսած է Անկարայի համալսարանի պատմական կենտրոնի հրատարակչատան կողմե, որ թուրք պետական շրջանակներու կիսապաշտոնական բանբերը կարելի է նկատել, ինչ որ կը փաստե, թե թեև վերջերս թուրք մտավորականներու որոշ խավի մը մոտ հայկական ցեղասպանության ճանաչումին հանդեպ դրական շարժում մը կա, պաշտոնական Թուրքիո դիրքորոշումը դեռ կը մնա այնպես, ինչպես որ է տասնյակ տարիներե ի վեր։

НОВЫЕ ТУРЕЦКИЕ ТЕОРИИ ОБ АРМЯНСКОМ ВОПРОСЕ

Доктор ист. наук АРТУР ПЕЙЛЕРЯН (Париж)

Резюме

Книга турецкого историка Эрталь Ильтера под заглавием «Армянская церковь и терроризм» (Анкара, 1996) была издана историческим центром университета Анкары. Искажая и фальсифицируя исторические факты и свидетельства, автор с удивительным легкомыслием старается убедить турецких читателей в том, что главными виновниками несчастий армян были армянская церковь и армянское духовенство. Всему миру известно—геноцид армян 1915—16 гг. организовало расистское пантюркистское младотурецкое правительство, что признали даже Талаат, Энвер и другие палачи армянского народа. Однако турецкий историк изо всех сил пытается доказать недоказуемое—будто причиной резни были сами армяне. Неужели ложь и бесстыдство не знают границ?